ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2019 թվականի
հունիսի 14-ին

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-91-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մաս.

«3.1. Առևտրական գործունեություն իրականացնող արտոնագրային վճար վճարողը դադարում է համարվել այդպիսին, եթե հարկային տարվա ընթացքում թույլ է տվել ապրանքների մատակարարման կամ տեղափոխության գործարքների փաստաթղթավորման պահանջների խախտման երկրորդ դեպք: Սույն մասում նշված դեպքում արտոնագրային վճար վճարողը դադարում է համարվել այդպիսին մինչև խախտման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Առևտրական գործունեություն իրականացնող արտոնագրային վճար վճարողները պարտավոր են, օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, փաստաթղթավորել ապրանքներ ձեռք բերելու գործարքները, այդ թվում՝ Հայաստանի

Հանրապետությունից Արցախի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծման գործարքները:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին մաս.

«6.1. Արտոնագրային վճար վճարողները «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 28^4-րդ հոդվածով նախատեսված՝ առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր չեն վարում:»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 2.1-ին մասով սահմանված պայմանը խախտելու դեպքում արտոնագրային վճար վճարողները կրում են ապրանքների մատակարարման կամ տեղափոխության գործարքների փաստաթղթավորման պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվություն:»:

Հոդված 4. Օրենքի N 1 հավելվածի 1-ին տողում «առևտրական տարածքը չգերազանցող խանութի, կրպակի, տաղավարի» բառերը փոխարինել «տարածքը չգերազանցող խանութի, կրպակի, տաղավարի (այդ թվում՝ ապրանքների պահպանումն ապահովող այլ տարածքի)» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

2019թ. հունիսի 20
Ստեփանակերտ
ՀՕ-62-Ն